ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1958 Общественные науки

Լ. Գևորգյան

1905—1907 ԹԹ. ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԸ ՊԱՐՏԻԱՅԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Բոլշևիկյան մամուլի առաջացումն ու զարգացումն անխզելիորեն կապված է մեր պարտիայի ամբողջ պատմության հետ։ Բոլշևիկյան մամուլի կազմակերպչական հակայական դերը առաջին անգամ մեր պարտիայի պատմության մեջ հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց 1905—1907 թթ. ռևոլյուցիայի օրերին։

Այդ ժամանակաշրջանում ավելի ակնհայտ դարձավ հասարակական ուժերի տեղաբաշխումը ռևոլյուցիայի և կոնտրռևոլյուցիայի միջև։ Այս բանը որոշակիորեն արտահայտվում էր նաև հայ իրականության մեջ։

Պրոլետարիատի ու գյուղացիության ռևոլյուցիոն պայքարից սարսափած հայ բուրժուազիան, խոշոր հողատերերը, կղերականությունը բոլոր միջոցներով հանդես էին գալիս ռևոլյուցիայի դեմ, հայ ժողովրդի պատմական անցյալը կեղծելու ու դեմագոգիայի միջոցով ձգտում էին աշխատավոր մասսաներին հեռու պահել ռևոլյուցիայից։ Բուրժուական, բուրժուա-նացիոնալիստական գրականությունն ու մամուլը հատկապես այս շրջանում լայն հարձակում օտարալեցին մարքսիզմի թեորիական ու տակտիկական հիմունքների դեմ։ Իրենց դիրքերը «հիմնավորելու» համար նրանք վկայակոչում էին իմպերիալիզմի դարաշրջանի ռեակցիոն իդեոլոգներին։ Մեծածավալ հոդվածներ էին նվիրվում գերմանական ու անգլիական ռեակցիոն պատմաբաններ ու սոցիոլոգներ Մոմզենի, Լամպրեխտի, Ռիկկերտի, Սպենսերի, Զոմբարտի, միջազգային օպորտունիզմի լիդեր Բեռնշտայնի, ռուսական սուբյեկտիվ դպրոցի սոցիոլոգ Միխայլովսկու և այլոց հայացքների մասսայականացմանը։

Հայ բուրժուական թերթ «Մշակ»-ը Պետերբուրգի պրոլետարիատի պայքարը որակում էր որպես «անկարգություն» և «անարխիա»։ Հանդես գալով գյուղացիական շարժումների դեմ, «Մշակ»-ը խնդիր էր դնում, որ պետությունը վարկ տա գյուղացիներին կալվածատիրական հողեր գնելու համար, որով և սահմանափակվում էր հայ լիբերալ բուրժուազիայի ամբողջ «ագրարային ծրագիրը»։ Հայ բուրժուական մամուլը, հակադրվելով ռևոլյուցիային, ամեն կերպ դավերգում էր հասարակության էվոլյուցիոն զարգացումը։ Այսպես, «Մշակ»-ին մոտ կանգնած «Ընկեր» շաբաթաթերթը բացահայտորեն ժխտում էր դասակարգային պայքարը և քարոզում ապադասակարգային «եղբայրություն»։ «Ընկեր»-ը ձգտում էր տարածել այն կեղծ, իդեալիստական գաղափարը, որ ոչ թե դասակարգային պայքարը, այլ լուսավորությունն ու մարդկային գիտակցությունն է «հասարակության զարգացման միջոցը»։ «Մարքսիզմը հույս է դնում փողոցներում կառուցված արհեստական բարիկադների վրա, իսկ ընկերության միակ և անխախտելի բարիկադը գեղարվեստի տա-

ճարն է, որից ցոլած ճառագայթները պետք է լուսավորեն և գեղեցկացնեն մարդկային գիտակցությունը»[1]։

Նույն դիրքերից էին գործում «Մուրճ» ամսագիրը և նրա շուրջը համախմբված բուրժուական մտավորականությունը։

Հայ եկեղեցական մամուլը նույնպես մասնակցեց այս ընդհանուր արշավանքին։ Թերթելով առաջին անգամ աշխարհարարով հրատարակվող «Հովիվ» շաբաթաթերթի համարները, միանգամայն պարզ է դառնում, թե ինչու հայ կղերականությունը ռևոլյուցիայի այդ տարիներին անհրաժեշտ է համարել գրելու ժողովրդին հասկանալի լեզվով։ «Հովիվը»-ը գործում էր նույն նպատակի համար, ինչ բուրժուական ամբողջ ծախու մամուլը։ Շաբաթաթերթը ճգնում էր ընթերցողներին համոզել, որ քրիստոնեական եկեղեցին, ինչպես և սոցիալ-դեմոկրատները ձգտում են իրականացնել կոմունիզմի սկզբունքը, սակայն նպատակին հասնելու միջոցները տարբեր են. եթե քրիստոնեության ձեռքին՝ «միակ կովի զենքն էր խոսքը, կենարար խոսքը՝ տգետ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու... այժմ այդ բոլորի հետ միացրել են և զենքը. մարդասպանությունը, արյունը՝ կովի մի ձև, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր եկեղեցին»[2]։

Նպատակը պարզ է, ամեն կերպ խաբել հայ աշխատավորներին, նրանց հեռու պահել ռևոլյուցիայից և ռևոլյուցիոն գործողություններից, բոլոր միջոցներով պահպանել տիրող կարգերը։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին իրենց գործունեությունը ավելի աշխուժացրին հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և հատկապես կոնտրռևոլյուցիոն դաշնակցությունը։ Նրանք նպատակ էին դրել «դասակարգերի համերաշխության», հայ ժողովրդի զարգացման ինչ որ սպեցիֆիկ պայմանների մասին կեղծ քարոզներով աշխատավորներին շեղել ռևոլյուցիոն պայքարից, ամրապնդել հայ բուրժուազիայի տնտեսական և քաղաքական դիրքերը։

Այս պայմաններում բոլշևիկների պարտիան լայն պայքար ծավալեց ռևոլյուցիայի հակառակորդներին մերկացնելու, բանվորներին ու գյուղացիներին ինքնակալության դեմ վճռական ռևոլյուցիոն պայքարի ոգով դաստիարակելու համար։ Պարտիական կազմակերպությունները այս ուղղությամբ խոշոր աշխատանք ծավալեցին։ Այդ մասին են վկայում մեծ քանակությամբ արխիվային նյութեր[3] և այլ փաստաթղթեր։

Հսկայական գործ կատարեց հատկապես բոլշևիկյան մամուլը։ Սկիզբ առնելով լենինյան «Իսկրա»-ից, բոլշևիկյան մամուլը 1905—1907 թթ. ռևոլյուցիային նախորդող և ռևոլյուցիայի տարիներին փառապանծ ուղի անցավ, դառնալով այն հզոր զենքը, որի միջոցով պարտիան պայքարում էր ռևոլյուցիայի թշնամիների դեմ, համախմբում պրոլետարիատի շարքերը, իրականացնում ժողովրդական մասսաների կողմից կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետության դեմ մղվող պայքարի գաղափարական-քաղաքական ղեկավարությունը։

[1] «Ընկեր» շաբաթաթերթ, № 1, 1906։

[2] «Հովիվ», № 1, 1906։

[3] Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 33, գործ 158, 160, 161, 180, 181 և այլն։

Այդ շրջանում ինքնակալության դեմ տարվող վճռական պայքարը բոլշևիկները կապում էին Դումայի ու կադետների կոնտրռևոլյուցիոն քաղաքականության մերկացման և համաժողովրդական զինված ապստամբության միջոցով Սահմանադիր ժողովի դումարման հարցի հետ։ Ամբողջ բոլշևիկյան մամուլի հետ միասին «Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը լայն պայքար ծավալեցին պարտիայի այս տակտիկական դիծը կյանքում իրականացնելու համար։ Այս հարցում նրանք ղեկավարվում էին ՌՍԴԲՊ 4-րդ համագումարի բոլշևիկյան պլատֆորմով, պարտիայի առաջնորդի՝ Լենինի ծրագրային հոդվածներով։ «Կայծ»-ի ու «Նոր խոսք»-ի մշտական պրակտիկ գործունեության համար որոշակի կարևորություն ուներ այն, որ նրանք քայլ առ քայլ հետևում էին այդ ժամանակաշրջանում Լենինի կողմից Պետերբուրգում և Մոսկվայում հրատարակվող բոլշևիկյան „Волна“, „Невская газета“, „Вперед“, „Эхо“, „Пролетарий“ թերթերին։

Հայ իրականության մեջ առաջին անգամ լեգալ մասսայական թերթեր «Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը մարքսիստական խոր վերլուծության էին ենթարկում երկրի քաղաքական իրադրությունը։ Նրանք ցույց էին տալիս, որ 1905 թվականի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը ցարիզմի գործարքն էր բուրժուազիայի հետ բանվորների ու գյուղացիների պայքարը ճնշելու, ամբողջ երկրով մեկ արյունոտ սպանդ կազմակերպելու համար։ Թերթերը բացահայտում էին ցարիզմի դաժան դեմքը, նշելով, որ ցարիզմը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ամենաոխերիմ թշնամին է, հրեական ջարդերի, հայ-թուրքական կոտորածների հրահրողն ու կազմակերպիչը։ Թերթերը օգնում էին ընթերցողներին հանգելու այն եզրակացության, որ տիրող կարգերին վերջ տալու, ժողովրդի ամենահրատապ պահանջները լուծելու միակ ուղին համաժողովրդական զինված ապստամբության միջոցով ցարիզմը տապալելու և դեմոկրատական կարգեր հաստատելու ուղին է։ Մերկացնելով բուրժուական մամուլի և մենշևիկյան լիդերների կեղծիքները, «Կայծ»-ը ինքնակալության կոնտրռևոլյուցիոն ձեռնարկում էր համարում Դումայի հրավիրելը. դրանով ինքնակալությունը ուզում էր վստահություն ձեռք բերել արևմտաևրոպական երկրների ֆինանսական շրջաններում, պառակտել ռևոլյուցիայի ուժերը և «խաղաղեցնել» երկիրը։ «Պետական դուման և պետական խորհուրդը ոչ այլ ինչ են, եթե ոչ իբրև կարկատան հին ռեժիմի, ինքնակալ կառավարության հին զգեստի, հին շորի վրա»,—գրում էր թերթը և ցույց տալիս, որ իր նպատակին հասնելու համար «Պրոլետարիատը նրանից ոչինչ սպասել չի կարող»[1]։

«Կայծ»-ը Դումայի էությունը մերկացնում է նրա աշխատանքները ընկրկելու առաջին իսկ օրից։ Այսպես, թերթի № 8-ի առաջնորդողում կարդում ենք, որ Պետական դուման բացվում է այնպիսի պայմաններում, երբ երկրի մեծ մասը ռազմական դրության մեջ է հայտարարված, ազատության հազարավոր մարտիկներ գնդակահարվել կամ սրախողող են արվել, տասնյակ հազարավորները տառապում են բանտերում և աքսորավայրերում։ Այս պայմաններում Դումայի բացումը «Կայծ»-ը համարում է «դառն հեգնություն ժողովրդի ազատագրման գործի հասցեին»։ Թերթը ցույց է տալիս, որ Դուման ոչ թե «պառլամենտ», «ներկայացուցչական ժողով» է, այլ նրա ծաղրապատկերը։ «Ա՞յդ էր միթե պահանջում ռևոլյուցիան, ա՞յդ է միթե ժողովրդի

[1] «Կայծ», № 1, 1 ապրիլի 1906։

պահանջած ազատությունը»,—դիմելով ընթերցողներին՝ գրում էր «Կայծ»-ը և նրանց պայքարի կոչում։

«Պետք է այդ Դուման տապալվի, նրա հետ՝ ինքնակալությունը։ Ռևոլյուցիան նրան կտանի, կսրբի և նրա տեղը կհրավիրի Հիմնադիր ժողով քառյակ ընտրողական ձայնատվությամբ, որը միայն կարող է տալ և պետք է տա երկրին կոնստիտուցիա դեմոկրատական հիմունքներով»[1]։

Ղեկավարվելով պարտիայի լենինյան տակտիկական դրույթներով, «Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը հետևողականորեն մերկացնում էին Դումայի ամբողջ գործունեությունը, հայ բանվորներին ու գյուղացիներին դաստիարակում վճռական ռևոլյուցիոն պայքարի ոգով։ Թերթերը լայն պայքար ծավալեցին ռևոլյուցիայի հիմնական խնդիրներից մեկի՝ ագրարային հարցի, կապակցությամբ կառավարության, Դումայի և բուրժուական պարտիայի մեքենայությունները մերկացնելու և գյուղացիական լայն մասսաներին պրոլետարիատի շուրջը համախմբելու համար։ Բազմաթիվ հաղորդումներ էին տպագրվում 1906 թ. գարնան-ամռան ամիսներին երկրում ծավալվող գյուղացիական շարժումների մասին։ Խոսելով այդ մասին, Ստ. Շահումյանը «Կայծ»-ում գրում էր. «Ամեն տեղ ձրիակեր ազնվականության և բարբարոս բյուրոկրատիայի ճնշումների ու կեղեքումների դարավոր զոհը, սովի ու թշվառության ճիրաններում տանջվող ռուս գյուղացիությունը սթափվում է իրեն կաշկանդող ծանր հիպնոզից։

Հող և ազատություն է գրել նա՝ այդ արթնացող հսկան իր դրոշակի վրա... սպառնում է հարվածով, մի ուժգին թափով հիմնահատակ անել տիրող կարգերը և բնաջինջ անել արյունարբու դահիճներին»[2]։

Գյուղացիական շարժումները գնալով ավելի կազմակերպված և գիտակցված բնույթ են կրում, գյուղացիության ավելի լայն մասսաները գնալով համոզվում են, որ իրենց միակ հավատարիմ դաշնակիցը, «իրենց թշնամիների անհաշտ թշնամին բանվոր դասակարգն է»։

Ինչպես հայտնի է, առաջին Պետական դումայում քննարկվող հիմնական հարցերից մեկը ագրարային հարցն էր։ Ամբողջ բոլշևիկյան մամուլի հետ միասին «Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը, հետևելով այդ հարցի «քննարկման» ընթացքին, գյուղացիական լայն մասսաներին պարզ ցույց էին տալիս, թե ինչպես կառավարող դասակարգերն ու նրանց պարտիաները ամեն կերպ ձգտում էին խաբել գյուղացիությանը, նրան հեռացնել ռևոլյուցիայից և ամրապնդել իրենց տիրապետությունը։ «Ինքնակալությունը և գյուղացիությունը» առաջնորդող հոդվածում («Կայծ», № 30) Սպանդարյանը մերկացնում էր կառավարության կողմից մտցրած հողային հարցի նախագիծը, ուղղակի նշելով, որ նախագիծը իր յուրաքանչյուր տողում, ամեն մի կետում պարզ կերպով արտահայտում է նրա կազմողների դասակարգային էությունը, իշխող դասի շահերի պաշտպանությունը։

«Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը բազմաթիվ օրինակներով ցույց էին տալիս, որ միապետությունը ոչ միայն չի բավարարի գյուղացիության տնտեսական ու քաղաքական պահանջները, այլ նրա պայքարը համարում է անարխիա,

---

[1] «Կայծ». № 8, 27 ապրիլի 1906։

[2] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1948, էջ 113։

ոճրագործություն տիրող կարգերի դեմ, սպառնում է ավելի լայնորեն կիրառել ռազմա-դաշտային դատարանները, ուժեղացնել ռեպրեսիաները պատերազմական կամ արտակարգ դրության մեջ հայտարարված վայրերում։ Թերթերը մերկացնում էին նաև ագրարային շարժումների դեմ մասնավոր սեփականության անձեռնմխելիության փաստարկումներով հանդես եկող կառավարական ու բուրժուական մամուլի կեղծիքները։

Բոլշևիկյան մամուլում լայն արձագանք էր գտնում ժողովրդական մասսաներին հուզող այնպիսի մի հարց, ինչպիսին ամնիստիայի պահանջն էր։ Ամբողջ երկրով մեկ ժողովուրդը պահանջում էր ազատ արձակել բանտերում և հեռավոր աքսորավայրերում, Սիբիրում տառապող հազարավոր մարտիկներին, վերացնել մահվան պատիժն ու ռեակցիայի կամայականությունները։ Ժողովրդի լայն խավերում այն հույսը, պատրանքը կար, որ Դուման վերջապես կկատարի այդ պահանջը։

«Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը, վերլուծելով հարցի էությունը, ցույց էին տալիս, որ Դուման ու կառավարությունը իրենց կամավոր ցանկությամբ այդպիսի ամնիստիա երբեք էլ չեն տա, քանի որ տիրապետող դասակարգերը իրենց գոյությունը պահպանում էին միմիայն մահացու սարսափ տարածելով բանտերի, աքսորավայրերի, գնդակահարությունների միջոցով։

«Դարձյալ ամնիստիայի մասին» հոդվածում, որը տպվել էր որպես «Կայծ» թերթի № 13-ի առաջնորդող, Սպանդարյանը մերկացնում է հասարակության խաղաղ զարգացման մասին բուրժուական լիբերալների և օպորտունիստների կողմից տարածվող կեղծիքը։ Նա ցույց էր տալիս, որ «խաղաղ ռևոլյուցիոներների» ճանապարհով, սակարգության միջոցով ամնիստիա հնարավոր չէ, որովհետև դա կլինի տիրապետող դասակարգերի կողմից ինքնակալական կարգերից, բյուրոկրատիայից կամավոր հրաժարումն։ Սպանդարյանը թերթի ընթերցողներին պարզաբանում էր, որ չպետք է մոռանալ պատմության դասերը, որ ռևոլյուցիոն ժողովրդի և ինքնակալության միջև «չկա և չի կարող լինել ոչ մի հաշտություն»։

Այդ ժամանակաշրջանի երկրի քաղաքական իրադրության փայլուն վերլուծությունն է տրվում Շահումյանի և Սպանդարյանի դրչին պատկանող մի շարք առաջնորդող հոդվածներում։ Շահումյանը իր «Կառավարությունը և Դումանը» («Կայծ», № 15), «Կադետները և սոցիալ-դեմոկրատիան» («Կայծ», № 16), Սպանդարյանը «Ռևոլյուցիայի ալիքը բարձրանում է» («Կայծ», № 15) և այլ բազմաթիվ հոդվածներում ամբողջ խորությամբ մերկացնում էին բուրժուական պարտիաներին և կառավարությանը, նշում էին, որ կառավարությունը չի իրագործում ժողովրդին հուզող այնպիսի պահանջներ, ինչպիսին են՝ գյուղացիներին հողով բավարարելը, երկրի բազմաթիվ շրջաններում հայտարարված զինվորական դրության վերացնելը, «երկիրը խաղաղեցնող» գեներալների վայրագություններին վերջ տալը, ամնիստիայի հայտարարելը և այլն։ Այդ բոլոր փաստերը ընթերցողներին համոզում էին, որ Դուման բոլորովին անզոր է երկիրը տիրող սարսափներից ազատելու գործում, որ ժողովրդի ամենահրատապ պահանջները կարող են լուծվել միայն զինված ապստամբության միջոցով՝ ինքնակալությունը տապալելով։

«Ցարի կառավարության և ռուս ժողովրդի դարավոր վեճը չի կարող լուծվել Պետական դումայի նման անզոր ու խղճուկ մի հիմնարկության միջոցով.

գրում էր Ստ. Շահումյանը։—Այդպիսի խոշոր պատմական վեճերը վճռվում են միայն հրով ու սրով և ոչ պառլամենտական դեղեցիկ ֆրազներով[1]։

Պարտիայի տակտիկական հիմունքները պաշտպանելու և հիմնավորելու, բանվորներին ու գյուղացիներին ռևոլյուցիոն պայքարի ոգով դաստիարակելու համար «Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը հետևողականորեն մերկացնում էին Մենշևիկների օպորտունիստական, հաշտվողական քաղաքականությունը։ Այդ պայքարը ամրողջ խորությամբ տարվում է հատկապես այն ժամանակ, երբ ՌՍԴԲՊ 4-րդ համագումարի ավարտումից հետո Թիֆլիս է վերադառնում Ստեփան Շահումյանը։

Այդ հարցերին են նվիրված համագումարի պատգամավոր Ստեփան Շահումյանի «ՌՍԴԲՊ վերջին համագումարը» («Կայծ», № 13) և «ՌՍԴԲՊ միացյալ համագումարը» («Կայծ», № № 17, 18) ընդարձակ հոդվածները։ Շահումյանը թերթի ընթերցողներին ծանոթացնում է ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո գոյություն ունեցող ներպարտիական պայքարին, մանրամասն վերլուծում է 4-րդ համագումարի աշխատանքները, ցույց է տալիս համագումարի դերը մեր պարտիայի պատմության մեջ։ Թերթերը որոշ բացատրություններով հրապարակեցին նաև համագումարի նյութերը, համագումարին առաջարկած բոլշևիկյան բանաձևերը։

Համագումարից հետո մենշևիկները ավելի առաջ դնացին իրենց օպորտունիստական տակտիկայի մեջ։ Զայնակցելով կադետներին, նրանք որոճում էին այն միտքը, թե Պետական դումայի հրավիրումով Ռուսաստանը մտնում է կոնստիտուցիոն, խաղաղ զարգացման ժամանակաշրջանը, և պրոլետարիատն ու գյուղացիությունը իրենց բոլոր հույսերը պետք է կապեն Դումայի գործունեության հետ։

Վ. Ի. Լենինն այդ օրերին գրում էր, որ մենշևիկները կոնտրոռևոլյուցիոն աշխատանք են կատարում, երբ իսկական պառլամենտարիզմի, կոնստիտուցիայի բացակայության պայմաններում պատրանքներ են տարածում բանվորների ու գյուղացիների մեջ, ձգտում նրանց հեռու պահել ակտիվ ռևոլյուցիոն պայքարից։ Նա պարտիայի գլխավոր խնդիրն էր համարում հանդես գալ այդ պատրանքների մերկացումով, ռևոլյուցիոն տակտիկայի անհրաժեշտության պրոպագանդայով։

Մասսաների մեջ եղած կոնստիտուցիոն պատրանքների մերկացման, այդ մասսաներին ռևոլյուցիոն պայքարի անհրաժեշտության ոգով դաստիարակելու գործում հսկայական նշանակություն ուներ «կադետական մինիստրությանը» պահանջի կոնտրռևոլյուցիոն էության մերկացումը բոլշևիկյան մամուլի կողմից։ Իրենց օպոզիցիա ձևացնելով, կադետները անվստահություն էին հայտնել կառավարությանը, պահանջելով այն փոխարինել Դումայի կողմից վստահություն վայելող մինիստրությամբ։ Այդ առթիվ ՌՍԴԲՊ մենշևիկյան Կենտկոմը պարտիական կազմակերպություններին դիմեց, առաջարկելով պաշտպանել Դումայի պահանջը՝ կադետական մինիստրություն կազմելու մասին։ Սրա դեմ դուրս եկավ ՌՍԴԲՊ Պետերբուրգի կոմիտեն, որը, մերժելով Կենտկոմի օպորտունիստական դիծը, ընդունեց Դուման և նրա կադետական մեծամասնությանը մերկացնող Վ. Ի. Լենինի առաջարկած բանաձևը։

[1] Ստ. Շահումյան «Ընտիր երկեր», Հայպետհրատ. 1948, էջ 90։

Այդ բանաձևի և „Вперед"-ում տպագրված իր բազմաթիվ հոդվածների մեջ Վ. Ի. Լենինը ամբողջ խորությամբ մերկացնում էր «կադետական մինիստրության» պահանջի իսկական էությունը։ Նա պարզաբանում էր, որ այդպիսի մինիստրությունն վերջին հաշվով կարող է նշանակվել բարձրագույն իշխանության, այսինքն՝ ցարի կողմից և դա կլինի միայն «գործարք ինքնակալության և լիբերալ բուրժուազիայի ընդդեմ սոցիալիստական բանվորների և ընդդեմ ռևոլյուցիոն գյուղացիության... Մենք չենք կարող պաշտպանել ժողովրդի բիկունքում բուրժուաների և չինովնիկների կնքած գործարքը»[1]։ Նա ցույց էր տալիս, որ, իհարկե, սոցիալ-դեմոկրատները կօգտագործեն գործարքի հետևանքով ստեղծված բարենպաստ պայմանները՝ կադետներին և Դումային մերկացնելու, ռևոլյուցիայի գործը առաջ տանելու համար, սակայն պրոլետարիատին կոչ անել պաշտպանելու այդ պահանջը, ինչպես անում էին մենշևիկները, կնշանակեր այլասերել նրա գիտակցությունը, թաքցնել նրանից ճշմարտությունը, կոնստիտուցիոն պատրանքներ տարածել և վնասել համաժողովրդական զինված ապստամբության գործին։

«Կայծ»-ը ու «Նոր խոսք»-ը իրենց էջերում լեգալ մամուլի հնարավորության սահմաններում արտացոլում էին այն պայքարը, որ տանում էին տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները 4-րդ համագումարում ընդունած մենշևիկյան որոշումների, մենշևիկյան Կենտրոնական Կոմիտեի կողմից Դումայի նկատմամբ վարած օպորտունիստական տակտիկայի դեմ։

Այսպես, «Կայծ»-ի № 31-ում, «Պարտիական կյանք» բաժնում կարդում ենք հետևյալ կարճ հաղորդումը։

«Պետերբուրգում կայացավ տեղական ՌՍԴԲՊ կազմակերպության կոնֆերենցիա. մասնակցում էին 43 «բոլշևիկ» և 26 «մենշևիկ»։ Ընդունվեցին բանաձևեր՝ համաձայն մեր պարտիայի ձախ թևի տակտիկայի»։

«Կայծ»-ի № 33-ը հաղորդում է հունիսի սկզբներին տեղի ունեցած ՌՍԴԲՊ հյուսիսային կոմիտեների խորհրդաժողովի մասին։ Այստեղ հաղորդվում էր նաև, որ Մոսկվայի շրջանային կազմակերպության առաջին համագումարը նույնպես «համաձայն չէ Կենտկոմի առաջարկության հետ և միանում է կենտրոնական ռայոնի շրջանային խորհրդաժողովի որոշումներին»։

«Մեր լոզունգները, մեր տակտիկան միշտ պետք է ի նկատի ունենա բանվոր դասակարգի նպատակները, նրա կռվի լիակատար հաղթանակը, գրում էր «Կայծ»-ը, -մեր ամեն մի քաղաքական քայլի նպատակը պետք է լինի կազմակերպել ինչքան կարելի է լայն մասսաները, ռևոլյուցիայի ուժերը համախմբել իր շուրջը, չրթացնելով պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, չսերմանելով մնասակար «իլլուզիաներ»[2]։

Հենվելով լենինյան գաղափարների վրա, թերթը ցույց էր տալիս, որ իհարկե, «լիբերալ մինիստրությունը ավելի պարզ կդարձնի դասակարգային հակասությունները, սակայն այլ բան է օգտագործել ստեղծված իրադրությունը, այլ բան է աջակցել այդպիսի պահանջին։

«Մենք պիտի պահանջենք լիազոր Հիմնադիր ժողով, մենք պիտի մղենք

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 10, էջ 636.
[2] «Կայծ», № 33, 2 հուլիսի 1906։

պատերազմ, այդ պահանջի շուրջը համախմբենք ժողովրդի լայն խավերը - պատրաստենք ռևոլյուցիոն բանակը։

Դումայից ստեղծված մինիստրության պահանջը պիտի ստեղծի ժողովրդի մեջ հույսեր, հավատ դեպի կադետները, դեպի «ժողովրդական ազատության» առևտուր անող բուրժուական «ազատության» պարտիան[1]։

1906 թվականի հուլիսին ցարական կառավարությունը ցրեց առաջին Պետական դուման։ Բոլշևիկների պարտիան այս փաստը օգտագործեց մասսաների մոտ դեռևս պահպանվող կոնստիտուցիոն պատրանքները մերկացնելու, բանվորներին և գյուղացիներին ռևոլյուցիոն պայքարի կոչելու, սևհարյուրակային ջոկատների հարձակումներին կազմակերպված դիմադրություն ցույց տալու համար։

«Կայծ»-ը այդ օրերին հետևողականորեն մերկացնում էր ռեակցիայի դավադրությունները։ Թերթը հիշատակում էր Ստոլիպինի շրջաբերականը իշխանության տեղական օրգաններին «կարգը պահպանելու» մասին, որ պարզապես ազդանշան էր ռեակցիայի ուժերի նոր հարձակման համար։ Թերթը նշում էր նաև, որ կառավարությունը ցրելով Դուման, մտադրություն ունի պրովակացիայի ենթարկել պրոլետարիատին, նրան անժամանակ դուրս բերել փողոց ջարդ կազմակերպելու համար։ Սակայն գիտակից պրոլետարիատը տեղիք չտվեց այդ պրովակացիային։ Խոսելով այդ մասին, Շահումյանն իր «Պետական դումայի արձակումը» մարտական առաջնորդողում գրում էր, որ ռևոլյուցիայի և ինքնակալության միջև գտնվող քողը ընկավ. երկու թշնամիներ կանգնած են դեմ առ դեմ։ Ստ. Շահումյանը նշում էր, որ ցարը Դուման ցրել է Եվրոպայի իմպերիալիստների համաձայնությամբ և այդ պետք է օգտագործի ռևոլյուցիան վերջնականապես ճնշելու նպատակով։ Զգուշացնելով, որ թշնամին դեռևս զորեղ է, Շահումյանը պրոլետարիատի ու ռևոլյուցիոն գյուղացիության առաջնահերթ խնդիրն էր համարում մոբիլիզացնել ու կազմակերպել իր սեփական ուժերը զինված ապստամբությունը կազմ ու պատրաստ դիմավորելու համար։ «Եվ այն մոտավոր լոզունգը, որ պետք է գրե իր դրոշակի վրա ռևոլյուցիոն ժողովուրդը, պետք է լինի Հիմնադիր ժողով քաղաքակ ընտրողական սկզբունքով։

Դուման մեռավ, կեցցե Հիմնադիր ժողովը[2]։

Ցարական կառավարությունը Դումայի ցրումը օգտագործեց բանվորների ու գյուղացիների դեմ նոր հարձակում սկսելու միտումով։ Հալածանքների էին ենթարկվում և փակվում բանվորական լեգալ կազմակերպություններն ու միությունները, բոլշևիկյան թերթերը։ Այդ օրերին էր, որ «Իրեն մեծությանը վիրավորելու, գերագույն իշխանությանը չհարգելու և զինված ապստամբության կոչ անելու համար»[3] «Կայծ»-ի հրատարակումը արգելվեց, իսկ նրա խմբագիր-հրատարակիչը դատի տրվեց։

«Կայծ»-ի արգելումից 12 օր հետո, 1906 թ. օգոստոսի 18-ին, սկսեց լույս տեսնել «Նոր խոսք» բոլշևիկյան թերթը։ Հանդիսանալով «Կայծ»-ի օրգանական շարունակությունը, «Նոր խոսք»-ը փայլուն կերպով առաջ տարավ նրա սկսած գործը։ Իր գոյության կարճ ժամանակաշրջանում (1906 թ. օգոս-

[1] «Կայծ», № 33, 2 հուլիսի 1906։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1948, էջ 178։
[3] Ա. Երզնկյան, Հուշեր, Երևան, 1926, էջ 28։

տոս-սեպտեմբեր ամիսներին (լույս է տեսել ընդամենը 15 համար) «Նոր խոսք»-ը հետևողականորեն պաշտպանում և մասսայականացնում էր բոլշևիկյան տակտիկական պլատֆորմը, մինչև վերջ մերկացնում մենշևիկների օպորտունիզմը։ Այդ ամիսներին մի շարք մենշևիկներ հանդես էին գալիս «անպարտիական» բանվորական «համագումար» հրավիրելու լիկվիդատորական պահանջով։ «Նոր խոսք»-ը մերկացնում էր մենշևիկների այդ քայլը։ Ելակետ ունենալով լենինյան «Պրոլետարի» թերթի մտքերը, դրույթները, «Նոր խոսք»-ը մատնանշում էր, որ «ով այժմ Ռուսաստանում պաշտպանում է բանվորական համագումարը՝ բանվորական պարտիա ստեղծելու կամ վերանորոգելու համար, հենց նա էլ պաշտպանում է պարտիայի լուծումը դասակարգի մեջ»[1]։ Թերթը պարզաբանում էր, որ այդ պահանջի իրականացումը կնշանակեր փաստորեն հրաժարվել մարքսիստական պարտիայից, պրոլետարիատի կազմակերպող և ղեկավարող ավանգարդից, հետևաբար, նաև ընդհանրապես ռևոլյուցիոն պայքարից։ Թերթը տարբեր շրջաններից բազմաթիվ հաղորդումներ էր տպում, որոնք մերկացնում էին մենշևիկյան լիդերների այդ դավաճանական քայլը և պահանջում հրավիրել պարտիայի արտակարգ համագումար։

Մենշևիկները պահանջում էին «հրավիրել նոր Դումա և նրա միջոցով դիմել Հիմնադիր ժողովին», սակայն բոլշևիկները ապացուցում էին, որ դեմոկրատական հիմունքներով Հիմնադիր ժողով կարող է հրավիրել միայն «նոր ժամանակավոր կառավարությունը, որը ծնունդ պետք է առնի իբրև հետևանք ժողովրդական ընդհանուր քվեարկման»։ Այդ շրջանում «Նոր խոսք»-ը հատկապես շեշտում էր պարտիայի լոզունգը, դեմոկրատական ռեսպուբլիկայի մասին որպես զինված ապստամբության նախապատրաստման և անցկացման հիմնական կոչերից մեկը։ Թերթը մասսայականացնում էր հայ աշխատավորների մեջ մարքսիստական այն դրույթը, որ ռևոլյուցիայի մեջ հիմնականը իշխանության հարցն է։ Միայն պրոլետարիատն է, որ առաջ է քաշում աշխատավորության լայն մասսաների շահերին ու ձգտումներին համապատասխանող պետական ձևերը, ուր «ինքնակալ պետք է լինի ինքը ժողովուրդը, բառիս իսկական իմաստով պետական իշխանությունը պետք է լինի համայն ժողովրդի կամքի արտահայտությունը։ Իշխանության երեք տեսակներն էլ (օրենսդրական, գործադիր ու դատական) պետք է միևնույն ծագումն ունենան, բխեն միևնույն աղբյուրից՝ ժողովրդից»[2]։

«Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը, պաշտպանելով և հիմնավորելով Կոմունիստական պարտիայի ռևոլյուցիոն տակտիկան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ, միաժամանակ բանվորներին ու քաղաքի և գյուղի կիսապրոլետարական մասսաներին պարզաբանում էին, որ նրանց վերջնական ազատագրությունը կապված է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի միջոցով մասնավոր սեփականության և շահագործման ամբողջ սիստեմի վերացման հետ։ Թերթերը նրանց, աշխատավորական լայն մասսաներին, պարզաբանում էին լենինյան այն դրույթը, որ բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից անմիջապես սոցիալիստականին անցնելու օրինաչափությունները ամբողջո-

[1] «Նոր խոսք», № 15, 21 սեպտեմբերի 1906։
[2] Նույն տեղում, № 9, 8 սեպտեմբերի 1906։

վին բխում են ռուսական առաջին ռևոլյուցիայի առանձնահատկություններից. այդ ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատի խաղացած համաշխարհային պատմական դերից։ «Կայծ»-ն ուղղակի նշում էր, որ ռևոլյուցիայի այդ շրջանում սոցիալ-դեմոկրատիայի և բանվոր դասակարգի անմիջական նպատակը կայանում է նրանում, որ «բուրժուական ռևոլյուցիայի շրջանակները որքան կարելի է լայնացնել, առաջ մղել իր պրոլետարական դասակարգային պահանջները և նույն բուրժուական կոնստիտուցիայի մեջ ստեղծել ավելի լայն ասպարեզ սոցիալ-ռևոլյուցիոն հեղաշրջման համար»։

«Կայծ»-ն ու «Նոր խոսք»-ը բանվորների ու գյուղացիների մեջ պատվաստում էին ռևոլյուցիոն կազմակերպվածություն, տոկունություն և հաստատակամություն, իրենց հաղթանակի համար մինչև վերջ պայքարելու կամք ու վճռականություն, խոր հավատ ռևոլյուցիայի հաղթանակի անխուսափելիության նկատմամբ։ Նրանք չէին թաքցնում, որ ռևոլյուցիայի հաղթանակը կպահանջի հակայական զոհեր, որ ռևոլյուցիան ընթանում է անընդհատ մակընթացությունների և տեղատվությունների ձևով, որի ընթացքում էլ ավելի համախմբվում ու կոփվում են պրոլետարիատի ու գյուղացիության ուժերը, և այդ պատճառով էլ ռևոլյուցիայի վերջնական հաղթանակը պահանջում է հերոսական պայքարի մի ամբողջ ժամանակաշրջան։

Բերելով բոլշևիկյան «Պրոլետարիա» թերթի առաջին համարում լույս տեսած Վ. Ի. Լենինի «Փոթորկից առաջ» հոդվածից մի ընդարձակ հատված, «Նոր խոսք»-ը լայնորեն արձագանքում էր լենինյան կոչին։

«Ավելի մեծ համարձակություն, ընկերնե՛ր, ավելի մեծ հավատ դեպի նոր փորձով հարստացած ռևոլյուցիոն դասակարգերի և ամենից առաջ պրոլետարիատի ուժը, ավելի մեծ ինքնուրույն ձեռներեցություն... Պրոլետարիատը պատրաստվում է պայքարի, համերաշխ և առույգ ընդառաջ է գնում փոթորկին, նետվում է ճակատամարտի ամենաեռանդուն տեղը։ Բավական է երկչոտ կադետների վերիշխանությունը, այդ «տխմար պինգվիններից», որոնք «վախկոտությամբ իրենց պարարտ մարմինը թաքցնում են ժայռերի մեջ»։

«Թող ավելի ուժգին պայթի փոթորիկը»[2]։

Ապա, իր համերաշխությունը հայտնելով, թերթը ավելացնում էր։

«Ամբողջ սրտով միանում ենք «Պրոլետարիա»-ի այս խոսքերին, միաժամանակ նրա հետ գոչելով։

«Թող պայթի փոթորիկը»[3]։

***

1907 թ. փետրվարին Բաքվի բոլշևիկյան կոմիտեի ղեկավարությամբ Ս. Սպանդարյանը հիմք է դնում «Օրերս» լեգալ թերթին։ Դա այն ժամանակաշրջանն է, երբ ակնհայտ եղավ, որ առաջին խոշոր գրոհը ցարիզմի դիրքերի վրա իր անհրաժեշտ արդյունքը չտվեց։ Մերկացնելով մենշևիկների դավաճանությունը, բոլշևիկները գտնում էին, որ անհրաժեշտ է նահանջել կազմակերպված, համախմբել ռևոլյուցիայի ուժերը ցարիզմի դեմ նոր վճռական հարձակման դուրս գալու համար։ Լենինի ղեկավարությամբ պարտիան վերակառուցեց իր տակտիկան՝ երկրի քաղաքական իրադրությանը համապատասխան։ «Օրերս»-ը բոլշևիկյան մյուս լեգալ հրատարակությունների հետ

[1] «Կայծ», № 5, 16 ապրիլի 1906։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 11, էջ 191։

[3] «Նոր խոսք», № 9, 31 օգոստոսի 1906։

միասին՝ մասսայականացնելով պարտիայի տակտիկան, մեծ դեր էր խաղում բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն դաստիարակության գործում։ Վերլուծելով առաջին Պետական դումայի նկատմամբ բոլշևիկների տակտիկայի էությունը, թերթը ցույց էր տալիս, որ փոփոխված իրադրության պայմաններում բոլշևիկները որոշել են մասնակցել 2-րդ Պետական դումայի ընտրություններին։ Թերթը միաժամանակ ցուցադրում էր, որ «պառլամենտական մեր գործունեությունը, սակայն, չի կազմելու մեր ընդհանուր գործունեության միակ և առաջնակարգ ձևը... Այն երկրում, ուր քաղաքական կյանքը ամբողջովին չի արտացոլվում նրա քաղաքական բարձր հիմնարկությունի մեջ, միայն պառլամենտական գործունեության ուժն ու նշանակությունը հավասար է համարյա զրոյի»[1]։

Նշելով, որ Պետական դումային բոլշևիկները մասնակցում են միայն տակտիկական նկատառումներով, և որ դեմոկրատական կարգերի հաստատումը մնում է պրոլետարիատի և գյուղացիության հիմնական նպատակը, «Օրերը» թերթը ցույց էր տալիս, որ Պետական դուման խոսարան է, որի միջոցով ցարական կառավարությունը ձգտում է գայթակղեցնել ժողովրդին և ճնշել ռևոլյուցիան։

Դումայի ընտրություններին նվիրված մի շարք հոդվածներում Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը հետևողականորեն պաշտպանում էին բոլշևիկյան տակտիկական դիծը, մերկացնող քննադատության ենթարկում կադետներին ու մենշևիկներին։ «Ինչ են ասում ընտրությունները» հոդվածում («Օրերը», № 1) Սպանդարյանը կադետների պարտությունը և սոցիալ-դեմոկրատների հաղթանակը մի շարք ընտրական շրջաններում բացատրում էր նրանով, որ մասսան հիասթափվեց կադետական ճառերից, որ ազգարնակչությունը դեռ գցեց սահմանադրական իլյուզիաները և հասկացավ, որ խաղաղ ճանապարհով անկարելի է վերջ դնել ներկա մեծ արհավիրքներին»։ Սպանդարյանը բանվորներին ու գյուղացիներին զգուշացնում էր կադետական վտանգից, մերկացնում էր կադետների դավադրությունները ռևոլյուցիայի նկատմամբ։ Շահումյանը Թիֆլիսից հաղորդում էր մենշևիկների նախընտրական մեքենայությունների մասին, որոնք իրենց համարելով «դեմոկրատիզմի» ջատագովներ, ի հեճուկս ռևոլյուցիայի թշնամիների, խախտում էին պրոլետարիատի շարքերի միասնությունն ու կազմակերպվածությունը։

«Օրերը»-ը Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր շրջաններից բազմաթիվ հաղորդագրություններ էր տպագրում, վերլուծում երկրի քաղաքական իրադրությունը, մերկացնում լուրժուական, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կոնտրռևոլյուցիոն էությունը, հայ բանվորներին ու գյուղացիներին դաստիարակում անհաշտ ռևոլյուցիոն պայքարի ոգով։ Թերթը շեշտում էր բանվոր դասակարգի ու գյուղացիության ռևոլյուցիոն դաշինքի վճռական նշանակությունը դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Այս առնչությամբ նշվում է, որ պրոլետարիատի ղեկավարությամբ հանդես եկող «գյուղացիությունը այդ ռևոլյուցիայի մեջ խոշոր և նույնիսկ որոշող դեր ունի կատարելու։ Ռևոլյուցիայի ընթացքն ու ելքը կախված պետք է լինի գյուղացիության բռնած դիրքից»[2]։

[1] «Օրերը», № 1, 2 փետրվարի 1907։

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Հայպետհրատ, 1939, էջ 89։

[3] «Օրերը», № 3, 4 փետրվարի 1907։

«Օրևոր»-ը 1907 թվականին Անդրկովկասում հրատարակվող միակ հայերեն բոլշևիկյան թերթն էր։ Չնայած իր կարճատև գոյությանը, նա հսկայական դեր խաղաց Բաքվի և Անդրկովկասի հայ աշխատավորության քաղաքական դաստիարակության գործում։

***

Պրոլետարիատի քաղաքական ինքնագիտակցությունը բարձրացնելու, բանվորներին ինտերնացիոնալ համերաշխության ոգով դաստիարակելու գործում կարևոր նշանակություն ուներ ցարիզմի արտաքին քաղաքականության հարցերի մարքսիստական վերլուծությունն ու լուսաբանումը 1905—1907թթ. հայ բոլշևիկյան մամուլի կողմից։ Թերթերը նշում էին, որ պրոլետարիատն ու գյուղացիությունը պետք է ամենայն աչալրջությամբ հետևեն ինքնակալության դիվանագիտական քայլերին։ Ցարիզմի արտաքին քաղաքականությունը ռուսական առաջին ռևոլյուցիային նախորդող և ռևոլյուցիայի տարիներին բնորոշ է եղել իր ավանտյուրիզմով։ Թերթերը վկայակոչում էին ռուսական և անգլիական կառավարությունների միջև ընթացող բանակցությունները նոր իմպերիալիստական խմբավորում կազմակերպելու համար, որը, ի վերջո, հանգեց Անտանտայի ձևավորմանը։

Թերթերը մերկացնում էին ռուսական ռևոլյուցիայի նկատմամբ արևմտյան իմպերիալիստների ոտնձգությունները։ Վերլուծելով պատմական փաստերը, նրանք ցույց էին տալիս ընթերցողներին, որ Արևմուտքը այժմ ռուսական ռևոլյուցիայի նկատմամբ կատարում է նույն դերը, ինչ ցարիզմը կատարում էր XIX դարի 40—50-ական թվականներին Արևմտյան Եվրոպայի ռևոլյուցիոն շարժումների նկատմամբ։ «Կայծ»-ը այդ համարում է «ծառայություն՝ ծառայության փոխարեն»։ Թերթերը Եվրոպայի իմպերիալիստներին մերկացնում էին որպես ամենամոլի ռեակցիոներների, որոնք ամեն ինչով օգնում են ցարին ռևոլյուցիան ճնշելու գործում։

«Կայծ»-ը մերկացնում էր ֆրանսիական կառավարությանը, որը ռևոլյուցիան ճնշելու համար ցարին տվել էր մոտ 2,5 միլիարդ ֆրանկի վարկ։

Թերթերը միաժամանակ ընդգծում էին, որ այդ՝ իսկ պատճառով՝ Արևմտյան Եվրոպայի և մասնավորապես Ֆրանսիայի աշխատավորները հանդես են գալիս իրենց կառավարությունների դեմ՝ ռուսական ռևոլյուցիայի պաշտպանությամբ։ Թերթերը մանրամասն մեկնաբանում էին, օրինակ, Անատոլ Ֆրանսի և հայտնի սոցիալիստ Ժորեսի ելույթները այդ առթիվ։

Ցույց տալով մյուս երկրների աշխատավորների, բոլոր պրոգրեսիվ մարդկանց համերաշխությունը ռուսական ռևոլյուցիայի նկատմամբ, Ս. Սպանդարյանը գրում էր. «Եթե խավար, սև ուժերը միանում են ռևոլյուցիայի, դեմոկրատիայի դեմ, միանում են և ռևոլյուցիոն ուժերը, միանում է բոլոր երկրների պրոլետարիատը այդ ռեակցիային դիմադրելու համար։ Եթե նոր «ֆիցիոզը պոգրոմշչիկների թերթը, «Ռոսիան» ցինիկաբար փորձում է վախեցնել մեզ գերմանական զորքերով, մենք արհամարհանքով ենք վերաբերվում այդ սպառնալիքին՝ գիտենալով, որ մեզ պաշտպանում է գերմանական պրոլետարիատը և նրա հետ միասին ամբողջ միջազգային պրոլետարիատը»[1]։

[1] Ս. Սպանդարյան. Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Հայպետհրատ, 1939, էջ 34։

Բազմաթիվ փաստեր բերելով, թերթերը ցույց էին տալիս ռուսական ռևոլյուցիայի համաշխարհային պատմական նշանակությունը, նշում էին, որ այն մի նախադուռ է հանդիսանում ճնշված ժողովուրդների, ամբողջ մարդկության վերածնության ճանապարհին, որ ռուսական ռևոլյուցիան «ցնցեց, թափահարեց մարդկության մթնոլորտը և մի նոր, թարմ, կենսունակ հոսանք մտցրեց մարդկության պատմության մեջ»։ Թերթերը հատկապես շեշտում էին ռուսական ռևոլյուցիայի ազդեցությունը կախյալ և գաղութային երկրների ժողովուրդների վրա։

«Ռևոլյուցիայի անդրադարձումները» վերնագիրը կրող «Նոր խոսք»-ի № 12-ի առաջնորդողում կարդում ենք. «Ամենուրեք կյանք, եռում։ Պարսկաստան, Չինաստան, Տաճկաստան, Կուբա և այլն արթնացել են իրենց գերեզմանային թմրությունից և նոր կյանք, նոր հարաբերություններ են ուզում ստեղծել»։ Թերթը հատկապես շեշտում է, որ այդ երկրներում ամենուրեք խոսում է արթնացած գիտակցությունը, ազատության ոգին, վերակազմության և վերածնության ձգտումը, ազատ կարգեր, տանելի պայմաններ ստեղծելու տենչը։ Այս է պատճառը, որ Եվրոպայի բուրժուազիան անիծում է ռուսական ռևոլյուցիային, քանի որ այն երկրները, որոնք նրա գաղութային սեփականությունն էին կազմում, «Այսօր ինքնուրույնանալու, սեփական ոտքի վրա կանգնելու, իրենց իսկական տիրոջն անցնելու ուղու վրա են։ Հազարավոր տարիների հանգստությունից արթնանում են Ասիայի ժողովուրդները . . . Դարավոր մրափից ոտքի ելնելով, հարյուրավոր միլիոն ժողովուրդը կտա և միլիոնավոր պրոլետարներ, որոնք դասակարգային ինքնագիտակցությամբ համակված, կրազմացնեն պրոլետարիատի կովող բանակի շարքերը...»։

Այնուհետև ցույց տալով ռուսական ռևոլյուցիայի գնահատումը երկու հակադիր ուժերի՝ իմպերիալիզմի ու ռեակցիայի և միջազգային պրոլետարիատի և գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների կողմից, թերթը գրում էր.

«Ռուսաստանի մեծ ռևոլյուցիայի այդ ընդհանուր նշանակությունը, այդ համաշխարհային ահագին ազդեցությունն ու հետևանքներն են, որ շահագրգռված մարդկությանը բաժանել են երկու հակադիր մասերի՝ մեկը, որ տիրապետող ու շահագործողն է աշխարհի, անիծում և պարսավում է Ռուսաստանի ժողովրդին, իսկ մյուսը, որ ճնշվողն ու շահագործվողն է երկրի վրա, փառաբանում, հերոսացնում է նույն ժողովրդին՝ «մարդկության այդ մարտական ավանդարդին»։

Մարդկության օբյեկտիվ պատմությունը կապացուցի՝ Ռուսաստանի մեծ ռևոլյուցիայի դժվար բմբռնելի և դժվար պատկերացնելի դերը մարդկային համաշխարհային ազատագրության պրոցեսում»[1]։

Պատմության հետագա ամբողջ ժամանակաշրջանը փայլուն կերպով ապացուցեց 1905—1907 թվականների ռուսական ռևոլյուցիայի միջազգային նշանակության մասին բոլշևիկյան այս գնահատականի ճշտությունը։ Այժմ մենք բոլորս ականատես ենք, թե ինչպիսի մեծ նվաճումներ են ձեռք բերվել պատմական զարգացման տեսակետից ամենակարճ ժամանակամիջոցում, 50 տարիների ընթացքում, կապիտալիզմի լծից մարդկության համաշխարհային ազատագրության ճանապարհին։

---

[1] «Նոր խոսք», № 12, 14 սեպտեմբերի 1908։

* * *

Ամբողջ խորությամբ վերլուծելով պարտիայի տակտիկական հիմունքները, այն տարածելով մասսաների մեջ բոլշևիկյան թերթերն այդ ամենը հիմնավորում էին Անդրկովկասի ռևոլյուցիոն իրադրության կոնկրետ փաստերով։

Աշխատավորական լայն մասսաների չարքաշ վիճակի և քաղաքական իրավազրկության պատկերի խոր բացահայտումով թերթերը օգնում էին բանվորներին ու գյուղացիներին հասկանալու երկրի քաղաքական իրադրության էությունն։

Հայ բանվորներն ու գյուղացիները բոլշևիկյան թերթերում տեսնում էին իրենց շահերի հետևողական պաշտպանին։ Երանք թերթերին բազմաթիվ նամակներ ու կոլեկտիվ թղթակցություններ էին գրում, դիմում նրանց իրենց գավառ հարցերի մասին։

Բանվորներն ու գյուղացիներն ամեն կերպ օգնում ու օժանդակում էին բոլշևիկյան թերթերի հրատարակությանը։ Անդրկովկասի բոլոր ծայրերից բանվորները միջոցներ էին հավաքում թերթերի համար, օգնում այն տարածելու։

Պարզ է, որ առանց այդպիսի օգնության և օժանդակության այդ ժամանակներում ռևոլյուցիոն թերթը չէր կարող իր գոյությունը պահպանել։